

ՀՀ ՀՆԱ-Ի ԲԱՇԽԱՍԾՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՏԿԱՆԻՇԻ

Գրիգոր ԿՈՒՐՂԻՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Տնտեսագիտության ինստիտուտի հայցորդ

Բանալի բառեր. ՀՆԱ, վերահսկողություն, տնտեսական աճ, կառավարում

Տնտեսության ամբողջական պատկերը ստանալու համար ամբողջ համախառն ավելացված արժեքը, գործունեությունը վերահսկելու հատկանիշից ելնելով, կարելի է ներկայացնել հետևյալ 3 մասերով՝ պետական, ազգային մասնավոր և օտարերկրյա վերահսկողության տակ գտնվող: Այսպես, «պետական կառավարման մարմինների» հատվածի համախառն ավելացված արժեքը դասվում է պետական մասին, «տնային տնտեսությունները սպասարկող ոչ առևտրային կազմակերպությունների» և «տնային տնտեսությունների» հատվածների համախառն ավելացված արժեքը՝ ազգային մասնավոր մասին: «Ոչ ֆինանսական կազմակերպությունների» և «ֆինանսական կազմակերպությունների» հատվածների համախառն ավելացված արժեքը բաշխվում է դրանց համապատասխան¹: ՀՆԱ-ն հիմնական գներով, և կառուցվածքային հատվածներով, տրված են աղյուսակներ 1-ում և 2-ում:

Աղյուսակ 1. 2000թ. համախառն ներքին արդյունքի (հիմնական գներով) բաշխվածությունն ըստ վերահսկողության հատկանիշի (հիմնական գներով)*

| Կառուցվածքային հատվածներ | Բաշխվածությունն ըստ վերահսկողության հատկանիշի | | | Ընդամենը |
|--|---|------------------|--------------------------------|-----------|
| | պետական | ազգային մասնավոր | օտարերկրյա վերահսկողության տակ | |
| Ոչ ֆինանսական կազմակերպություններ (կորպորացիաներ) | 123 624.7 | 405 582.3 | 104 881.3 | 634 088.3 |
| | 13.0 | 42.6 | 11.0 | 66.5 |
| | 19.5 | 64.0 | 16.5 | 100.0 |
| | 60.9 | 63.5 | 94.4 | 66.5 |
| | 7 936.2 | 4 576.5 | 6,219.7 | 18 732.4 |
| Ֆինանսական կազմակերպություններ (կորպորացիաներ) | 0.8 | 0.5 | 0.7 | 2.0 |
| | 42.4 | 24.4 | 33.2 | 100.0 |
| | 3.9 | 0.7 | 5.6 | 2.0 |
| Դետական կառավարման մարմիններ | 71 461.2 | - | - | 71 461.2 |
| | 7.5 | - | - | 7.5 |
| | 100.0 | - | - | 100.0 |
| | 35.2 | - | - | 7.5 |
| Տնային տնտեսությունները սպասարկող ոչ առևտրային կազմակերպություններ (SSUԱԿ) | - | 1 151.1 | - | 1 151.1 |
| | - | 0.1 | - | - |
| | - | 100.0 | - | 100.0 |
| | - | 0.2 | - | 0.1 |
| Տնային տնտեսություններ | - | 227 657.9 | - | 227 657.9 |
| | - | 23.9 | - | - |
| | - | 100.0 | - | 100.0 |
| | - | 35.6 | - | 23.9 |
| Ընդամենը համախառն, ավելացված արժեքը հիմնական գներով | 203 022.1 | 638 967.8 | 111 101.0 | 953 090.9 |
| | 21.3 | 67.0 | 11.7 | 100.0 |
| | 21.3 | 67.0 | 11.7 | 100.0 |
| | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 |

¹ Հայաստանի ազգային հաշիվները, Եր., ՀՀ ԱՎԾ, 2016, էջ 163:

* մլն դրամ, իսկ տոկոսային ցուցանիշները հաշվարկված են՝ ընդամենի նկատմամբ, ընդամենի նկատմամբ ըստ տնտեսության հատվածների: Աղբյուրը՝ Հայաստանի ազգային հաշիվները, Եր., ՀՀ ԱՎԾ, 2003, էջ 87-89:

Աղյուսակ 1-ի տվյալներից հետևում է, որ 2000թ. ՀՀ համախառն ավելացված արժեքի (հիմնական գներով) միայն 21,3%-ն է ստեղծվել պետական, 67,0%-ը ձևավորվել է ազգային մասնավոր, իսկ 11,7%-ը օտարերկրյա վերահսկողության տակ գտնվող տնտեսության հատվածներում: Ստեղծած իրերի նման վիճակը պայմանավորված է հան-րապետությունում դեռևս 1990-ականների սկզբից իրականացված հողի և գյուղատնտեսական տեխնիկայի, բնակարանային ֆոնդի և պետական գույքի մասնավորեցման լայնամասշտաբ պետական ծրագրերով: Ըստ որում թողարկված ՀՆԱ-ի (հիմնական գներով) 66.5%-ը բաժին է ընկել ոչ ֆինանսական կազմակերպություններին (կորպորացիաների), 2.0%-ը՝ ֆինանսական կազմակերպություններին (կորպորացիաների), 7.5%-ը՝ պետական կառավարման մարմիններին, 0.1%-ը՝ տնային տնտեսությունները սպասարկող ոչ առևտրային կազմակերպություններին (SSUԱԿ), 23.9%-ը՝ տնային տնտեսություններին:

Աղյուսակ 2. ՀՆԱ-ն ըստ հատվածների և վերահսկողության հատկանիշի, 2006թ. և 2010թ. (հիմնական գներով)²

| Կառուցվածքային հատվածներ | 2006 | | | | 2010 | | | |
|--|---|------------------|--------------------------------|-------------|---|------------------|--------------------------------|-------------|
| | Բաշխվածությունն ըստ վերահսկողության հատկանիշի | | | Ընդամենը | Բաշխվածությունն ըստ վերահսկողության հատկանիշի | | | Ընդամենը |
| | պետական | ազգային մասնավոր | օտարերկրյա վերահսկողության տակ | | պետական | ազգային մասնավոր | օտարերկրյա վերահսկողության տակ | |
| Ոչ ֆինանսական կազմակերպություններ (կորպորացիաներ) | 113 920.5* | 1 021 535.3 | 399 024.5 | 1 534 480.3 | 131 038.9 | 1 214 863.2 | 542 338.2 | 1 888 240.3 |
| | 4.6 | 41.6 | 16.2 | 62.4 | 4.1 | 38.8 | 17.3 | 60.2 |
| | 7.4 | 66.6 | 26.0 | 100.0 | 7.0 | 64.3 | 28.7 | 100.0 |
| | 38.6 | 58.5 | 95.5 | 62.4 | 30.1 | 58.0 | 89.3 | 60.2 |
| Ֆինանսական կազմակերպություններ (կորպորացիաներ) | 11 957.9 | 23 181.3 | 19 006.0 | 54 145.2 | 16 338.9 | 43 619.3 | 65 159.7 | 125 117.9 |
| | 0.5 | 0.9 | 0.8 | 2.2 | 0.5 | 1.4 | 2.1 | 4.0 |
| | 22.1 | 42.8 | 35.1 | 100.0 | 13.0 | 34.9 | 52.1 | 100.0 |
| | 4.0 | 1.3 | 4.5 | 2.2 | 3.8 | 2.1 | 10.7 | 4.0 |
| Պետական կառավարման մարմիններ | 169 651.3 | - | - | 169 651.3 | 287 303.1 | - | - | 287 303.1 |
| | 6.9 | - | - | 6.9 | 9.2 | - | - | 9.2 |
| | 100.0 | - | - | 100.0 | 100.0 | - | - | 100.0 |
| | 57.4 | - | - | 6.9 | 66.1 | - | - | 9.2 |
| Տնային տնտեսությունները սպասարկող ոչ առևտրային կազմակերպություններ (SSUԱԿ) | - | 3 033.7 | - | 3 033.7 | - | 12 636.5 | - | 12 636.5 |
| | - | 0.1 | - | 0.1 | - | 0.4 | - | 0.4 |
| | - | 100.0 | - | 100.0 | - | 100.0 | - | 100.0 |
| | - | 0.2 | - | 0.1 | - | 0.6 | - | 0.4 |
| Տնային տնտեսություններ | - | 697 505.9 | - | 697 505.9 | - | 822 008.2 | - | 822 008.2 |
| | - | 28.4 | - | 28.4 | - | 26.2 | - | 26.2 |
| | - | 100.0 | - | 100.0 | - | 100.0 | - | 100.0 |
| | - | 40.0 | - | 28.4 | - | 39.3 | - | 26.2 |
| Ավելացված արժեք (համախառն, հիմնական գներով) | 295 529.7 | 1 745 256.2 | 418 030.5 | 2 458 816.4 | 434 680.9 | 2 093 127.2 | 607 497.9 | 3 135 306.0 |
| | 12.0 | 71.0 | 17.0 | 100.0 | 13.8 | 66.8 | 19.4 | 100.0 |
| | 12.0 | 71.0 | 17.0 | 100.0 | 13.8 | 66.8 | 19.4 | 100.0 |
| | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 |

² *մլն դրամ, տոկոսային ցուցանիշները հաշվարկված են համապատասխանաբար՝ ընդամենի նկատմամբ, ընդամենի նկատմամբ ըստ տնտեսության համապատասխան հատվածների և ենթահատվածների: Աղբյուրը. Հայաստանի ազգային հաշիվները, Եր., ՀՀ ԱՎԾ, 2016, էջ 119-121, 127-129:

Հատկանշական է նաև, որ պետական հատվածում ստեղծված համախառն ավելացված արժեքի (հիմնական գներով) ըստ վերահսկողության հատկանիշի բաշխվածության, ոչ ֆինանսական կառույցների (կորպորացիաների) բաժինը կազմել է 19.5%, ֆինանսական կառույցների (կորպորացիաների) հատվածինը՝ 42.4%: Այս հատվածում, ի տարբերություն նախորդի, շուրջ 3 անգամ մեծ է օտարերկրյա վերահսկողության տակ գտնվող տնտեսության բաժինը: ՀՆԱ-ն ըստ հատվածների և վերահսկողության հատկանիշի 2006թ., 2010թ., 2012 թ., 2014 թ. տրված են աղյուսակ 2 և 3-ում:

Աղյուսակ 3. ՀՆԱ-ն ըստ հատվածների և վերահսկողության հատկանիշի 2012թ. և 2014թ. (հիմնական գներով)³

| Կառուցվածքային հատվածներ | 2012 | | | | 2014 | | | |
|---|---|------------------|--------------------------------|-------------|---|------------------|--------------------------------|-------------|
| | Բաշխվածությունն ըստ վերահսկողության հատկանիշի | | | Ընդամենը | Բաշխվածությունն ըստ վերահսկողության հատկանիշի | | | Ընդամենը |
| | Պետական | ազգային մասնավոր | օտարերկրյա վերահսկողության տակ | | պետական | ազգային մասնավոր | օտարերկրյա վերահսկողության տակ | |
| Ոչ ֆինանսական կազմակերպություններ (կորպորացիաներ) | 172 373.5* | 1 232 746.8 | 572 382.7 | 1 977 503.0 | 184 050.4 | 1 316 408.9 | 699 361.3 | 2 199 820.6 |
| | 4.4 | 31.6 | 14.7 | 50.7 | 4.2 | 30.0 | 16.0 | 50.2 |
| | 8.7 | 62.3 | 29.0 | 100.0 | 8.4 | 59.8 | 31.8 | 100.0 |
| | 33.7 | 45.2 | 86.5 | 50.7 | 30.1 | 44.4 | 86.7 | 50.2 |
| Ֆինանսական կազմակերպություններ (կորպորացիաներ) | 9 124.3 | 70 996.3 | 89 171.0 | 169 291.6 | 12 018.2 | 85 884.6 | 107 294.1 | 205 196.9 |
| | 0.2 | 1.8 | 2.3 | 4.3 | 0.3 | 2.0 | 2.4 | 4.7 |
| | 5.4 | 41.9 | 52.7 | 100.0 | 5.9 | 41.8 | 52.3 | 100.0 |
| | 1.8 | 2.6 | 13.5 | 4.3 | 2.0 | 2.9 | 13.3 | 4.7 |
| Պետական կառավարման մարմիններ | 330 412.4 | - | - | -330 412.4 | 415 788.8 | - | - | 415 788.8 |
| | 8.5 | - | - | 8.5 | 9.5 | - | - | 9.5 |
| | 100.0 | - | - | 100.0 | 100.0 | - | - | 100.0 |
| | 64.5 | - | - | 8.5 | 67.9 | - | - | 9.5 |
| Տնային տնտեսությունները սպասարկող ոչ առևտրային կազմակերպություններ (ՏՏՈՈԱԿ) | - | 12 311.4 | - | 12 311.4 | - | 13 666.3 | - | 13 666.3 |
| | - | 0.3 | - | 0.3 | - | 0.3 | - | 0.3 |
| | - | 100.0 | - | 100.0 | - | 100.0 | - | 100.0 |
| | - | 0.5 | - | 0.3 | - | 0.5 | - | 0.3 |
| Տնային | - | 1 411 678.0 | - | 1 411 678.0 | - | 1 547 776.8 | - | 1 547 776.8 |
| Տնտեսություններ | - | 36.2 | - | 36.2 | - | 35.3 | - | 35.3 |
| | - | 100.0 | - | 100.0 | - | 100.0 | - | 100.0 |
| | - | 51.7 | - | 36.2 | - | 52.2 | - | 35.3 |
| Ավելացված արժեք (համախառն, հիմնական գներով) | 511 910.2 | 2 727 732.5 | 661 553.7 | 3 901 196.4 | 611 857.4 | 2 963 736.6 | 806 655.4 | 4 382 249.4 |
| | 13.1 | 69.9 | 17.0 | 100.0 | 14.0 | 67.6 | 18.4 | 100.0 |
| | 13.1 | 69.9 | 17.0 | 100.0 | 14.0 | 67.6 | 18.4 | 100.0 |
| | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 |

³ *Այլն դրամ, իսկ տոկոսային ցուցանիշները հաշվարկված են համապատասխանաբար՝ ընդամենի նկատմամբ, ընդամենի նկատմամբ ըստ տնտեսության համապատասխան հատվածների և ենթահատվածների: Աղբյուրը. Հայաստանի ազգային հաշիվները, Եր., ՀՀ ԱՎԾ, 2016, էջ 164-167, 172-175:


Աղյուսակից հետևում է, որ 2006-2010թթ. ՀՆԱ-ի կազմում շարունակվել է նվազել ոչ ֆինանսական կազմակերպությունների (կորպորացիաների) հատվածի բաժինը. 2000թ. 66.5%-ից այն 2006թ. հասել է 62.4%-ի, 2010թ.՝ 60.2%-ի, 2012թ.՝ 50.7%-ի, 2014թ.՝ 50.2%-ի (աղյուսակ 3): Ոչ ֆինանսական կազմակերպությունների (կորպորացիաների) հատվածում պետական բաժնեմասի կշիռը 2000թ. 21.3%-ի փոխարեն, 2006թ. կազմել է 12.0%, 2010թ.՝ 13.8%, 2012թ.՝ 13.1%, 2014թ.՝ 14.0%:

Ինչպես տեսնում ենք, սկսած 2006թ. ՀՆԱ-ի թողարկման կազմում (հիմնական գներով) պետական հատվածի բաժինն ավելացել է 20.0 տոկոսային կետով, ինչն անկասկած լրացուցիչ ֆինանսական բեռ է պետական բյուջեի վրա: Ըստ որում, այդ աճը հիմնականում տեղի է ունեցել պետական մարմինների հաշվին, որի բաժինը 2000թ. ՀՆԱ-ի (հիմնական գներով) մեջ կազմել է 7.5%, 2006թ.՝ 6.9%, 2010թ.՝ 9.2%, 2012թ.՝ 8.5%, 2014թ.՝ 9.5%: Այլ կերպ ասած 2000թ. ցուցանիշի նկատմամբ 2014թ. գրանցվել է 2.0 տոկոսային կետով աճ, իսկ բացարձակ արժեքներով 2000թ. 71461.2 մլն դրամից այն 2014թ. հասել 415788.8 մլն դրամի (աճը՝ 581.8%, երբ ՀՆԱ-ն նույն ժամանակահատվածում ավելացել է 459.8%-ով, ինչը դրական երևույթ է):

Անհրաժեշտ է ընդգծել, որ ՀՆԱ-ի (հիմնական գներով) ստեղծման գործում բավականին ցածր է ֆինանսական կազմակերպությունների (կորպորացիաների) բաժինը: Այսպես, 2000թ. այն կազմել է թողարկված ՀՆԱ-ի մեծության միայն 2%-ը (18732.4 մլն դրամ), 2006թ. 2.2% (54145.2 մլն դրամ), 2014թ.՝ 4.7% (205196.9 մլն դրամ): Այսինքն բացարձակ արժեքով ֆինանսական կազմակերպությունների (կորպորացիաների) ստեղծած ՀՆԱ-ն 2014թ. 2000թ.-ի համեմատ ավելացել է շուրջ 11 անգամ: Թեև այդ կառուցվածքային հատվածն ունեցել է աճի բարձր տեմպ, նրա բաժինը մնում է ցածր:

Ոչ ֆինանսական կազմակերպությունների (կորպորացիաների) հատվածի ՀՆԱ-ի կառուցվածքի ուսումնասիրությունը ըստ սեփականության ենթահատվածերի (%-ով) ցույց է տալիս (գծանկար 1), որ 2000-2014թթ. Նկատելիորեն (15.6 տոկոսային կետով՝ 2000թ. 16.2%-ից 2014թ. հասնելով 31.8%-ի) ավելացել է օտարերկրյա վերահսկողության տակ գտնվող հատվածի բաժինը, որը ձեռք է բերվել ազգային մասնավոր հատվածի (3.6 տոկոսային կետով) և հիմնականում պետական հատվածի (12.0 տոկոսային կետով) նվազեցման հաշվին: Այլ կերպ ասած 2000-2014թթ. ոչ ֆինանսական կազմակերպությունների (կորպորացիաների) հատվածի ՀՆԱ-ի կառուցվածքում գրեթե 2 անգամ ավելացել է օտարերկրյա վերահսկողության տակ գտնվող սեփականության կշիռը:

Կառուցվածքն ըստ սեփականության ենթահատվածների (%)⁴




Գծանկար 1. Ոչ ֆինանսական կազմակերպությունների հատվածի համախառն ավելացված արժեքի

Ֆինանսական կազմակերպությունների հատվածի ՀՆԱ-ի կառուցվածքի ուսումնասիրությունն (գծանկար 2) ըստ սեփականության ենթահատվածների (%-ով) ցույց է տալիս, որ 2000-2014թթ. օտարերկրյա վերահսկողության տակ գտնվող սեփականության բաժինն ավելացել է 19 տոկոսային կետով (2000թ.-ի 33.2%-ից 2014թ.-ին այն հասել է 52.3%-ի), դրանով իսկ հատելով տվյալ հատվածում ստեղծված ՀՆԱ-ի կեսի սահմանը: Այդպիսի աճը հիմնականում ձեռք է բերվել պետական հատվածի (36.5 տոկոսային կետ) հաշվին, քանի որ նույն ժամանակահատվածում ազգային մասնավոր հատվածի բաժինը 24.4%-ից հասել է 41.8% (աճը՝ 17.4 տոկոսային կետ):

⁴ Աղբյուրը՝ Հայաստանի ազգային հաշիվները, Եր., ՀՀ ԱՎԾ, 2006թ., էջ 107-117, Հայաստանի ազգային հաշիվները, Եր., ՀՀ ԱՎԾ, 2012թ., էջ 130, Հայաստանի ազգային հաշիվները, Եր., ՀՀ ԱՎԾ, 2014թ., էջ 111, Հայաստանի ազգային հաշիվները, Եր., ՀՀ ԱՎԾ, 2016թ., էջ 176:

Կառուցվածքն ըստ սեփականության ենթահատվածների (%)⁵



Գծանկար 2. Ֆինանսական կազմակերպությունների հատվածի համախառն ավելացված արժեքի

Ոչ ֆինանսական և ֆինանսական կազմակերպությունների (կորպորացիաների) հատվածների համախառն ավելացված արժեքի (հիմնական գներով) փոփոխություններն ըստ սեփականության ենթահատվածների ցույց է տալիս (աղյուսակ 1), որ 2014թ.-ին 2000թ.-ի համեմատությամբ.

➤ ոչ ֆինանսական հատվածի համախառն ավելացված արժեքը պետական ենթահատվածում ավելացել է 142.2%-ով, ազգային մասնավոր ենթահատվածում՝ 327.3%, օտարերկրյա վերահսկողության տակ գտնվող ենթահատվածում՝ 683.0%-ով, իսկ ընդամենը՝ 34.6%-ով, ինչն էլ հանգեցրել է նշված ենթահատվածների տեսակարար կշիռների համապատասխան չափերով փոփոխությունների,

➤ ֆինանսական հատվածի համախառն ավելացված արժեքը պետական ենթահատվածում ավելացել է 151.9%-ով, ազգային մասնավոր հատվածում՝ 1867.4%-ով, օտարերկրյա վերահսկողության տակ գտնվող ենթահատվածում՝ 1730.0%-ով, իսկ ընդամենը՝ 1097.3%-ով, ինչն էլ հանգեցրել է նշված ենթահատվածների տեսակարար կշիռների համապատասխան չափերով փոփոխությունների:

⁵ Աղբյուրը՝ Հայաստանի ազգային հաշիվները, Եր., ՀՀԱՎՃ, 2006թ., էջ 107-117, Հայաստանի ազգային հաշիվները, Եր., ՀՀ ԱՎՃ, 2012թ., Հայաստանի ազգային հաշիվները, Եր., ՀՀ ԱՎՃ, 2014թ., էջ 111, Հայաստանի ազգային հաշիվները, Եր., ՀՀ ԱՎՃ, 2016թ., էջ 176:

Գրիգոր ԿՈՒՐԴԻՆՅԱՆ

ՀՀ ՀՆԱ-ի բաշխվածությունն ըստ վերահսկողության հատկանիշի

Բանալի բառեր. ՀՆԱ, վերահսկողություն, տնտեսական աճ, կառավարում

Հոդվածում ներկայացված է ՀՀ ՀՆԱ-ի արտադրությունը ըստ ազգային տրնտեսության ենթահատվածների: Վերլուծության արդյունքում պարզ է դարձել, որ 2000 թվականին ՀՀ համախառն ավելացված արժեքի (հիմնական գներով) միայն 21,3%-ն է ստեղծվել պետական, 67,0%-ը ձևավորվել է ազգային մասնավոր, իսկ 11,7%-ը օտարերկրյա վերահսկողության տակ գտնվող տնտեսության հատվածներում: Հեղինակը փաստերի և ՀՀ ԱԿԾ վիճակագրական տվյալների ուսումնասիրության արդյունքում եզրահանգել է, որ 2000-2014թթ. ոչ ֆինանսական կազմակերպությունների (կորպորացիաների) հատվածի ՀՆԱ-ի կառուցվածքում գրեթե երկու անգամ ավելացել է օտարերկրյա վերահսկողության տակ գտնվող սեփականության կշիռը:

Grigor KURGHINYAN

Distribution of GDP RA by control character

Key words: GDP, control, economic growth, management

The article presents the production of GDP in RA by subsectors of the national economy. As a result of the research it became clear that in 2000 only 21.3% of the gross surplus value / at basic prices / was created in economic sectors of the state control, 67.0% - of the national private control, and 11.7% - of foreign control. In 2006-2010 in the GDP the part of the non-financial institutions / corporations / continued to decline. The author, as a result of research of the facts and statistical data of the NSS, concludes that in 2000-2014 in the GDP of the sector of non-financial institutions /corporations/ the share of foreign ownership control almost double increased. Assessing positively the involvement of foreign capital in the economy of RA the author finds that the Armenian government should carry out a planned policy to improve the investment field.

Григор КУРГИНЯН

Распределение ВВП РА по свойству контроля

Ключевые слова: ВВП, экономический рост, контроль, управление

В статье представлено производство ВВП Армении по подсекторам национальной экономики. В результате исследования стало ясно, что в 2000 году только 21.3% валовой прибавочной стоимости (по основным ценам) был создан в экономических секторах государственного контроля, 67.0% - национального частного контроля, а 11.7% - иностранного контроля. В 2006-2010 годах в составе ВВП продолжала снижаться часть не финансовых организаций (корпорации). Автор, в результате исследований фактов и статистических данных НСС, заключает, что в 2000-2014 годах в структуре ВВП сектора не финансовых организаций (корпорации) почти вдвое увеличилась доля владения иностранного контроля. Оценивая положительно вовлечения иностранного капитала в экономику РА, автор находит, что правительство должно осуществлять политику улучшения инвестиционного поля.